Դանիել Վարուժան

Թիապարտները

Պատերազմ է հրոչակված: Թընդանոթի մը պողպատ
Ծանըր սայլին լըծեր են թիապարտներ մերկիրան.
Անհեթեթ բեռը պետք է մինչև գագաթը տանին
Սա դիմացի խրոխտ լերան՝ որ իր գլուխն է մըխըրճեր
Կապույտին մեջ արևոտ՝ իբրև հալած կապարի:
Անկե ո՛չ ես, ո՛չ գոմեշ ելավ, և ո՛չ ալ ջորին.
Սեպերեն վար սահեցան պճեղներն անոնց կըրկաճիղ.
Ծալլըվեցան ուժասպառ և դողահար ծունկերնին,
Կամ թե երբուծը անոնց հանկարծակի պայթեցավ
Բուռըն հևքեն զըսպըված թոքրենուն մե տապահեղձ:
Եվ արդ մընաց կըրելու հերոսներո՛ւն մըկնագեղ
Բեռը ձուլված արյունով, բեռը մահվամբ ծանրակիր:
Ետևեն բիրտ զինվորներ կը մըտրակեն անխընա
Թիապարտները բոպիկ, մերկ կըռնակով, գըլխեբաց,
Որոնց մարմինն՝ որ ուներ անբըծություն մարմարի,
Այսօր թուխ է իբրև պղինձ քուրա մը միշտ հըրամերձ:
Կը տոչորե անդադար սևցած հըզոր ծոծրակնին
Ամրան արևն ու հանկարծ կը կեցընե, կը խըմե
Քըրտինքի շիթ մը մարգրիտ՝ ողնաշարնեն վար սահող…
Վե՜ր, վե՜ր. Փոկերը ճարպոտ դժնե հարված մըտրակին
Կը շառաչեն կըռնակնունյ, մեջքերնուն շուրջ կ'ոլորտին,
Եվ ուսերնեն վար մինչև պորտերն անոնց սողալով՝
Կը գալարվին լըզվըռտվող օձերու պես քըստմնելի.

Եվ թողված հետքը կապույտ, կաղապարով խոտորնակ,
Կամաց կամաց կը սկըսի սրյան ծիլեր դուրս բըխել։
Հոլա՛, վե՜ր, վե՜ր։ Ու պարանը անճոռնի, հաստաբեստ,
Մարմինն իրենց կը պըրկե, միսերնուն մեջ կը թաղվի.
Նյարդերու բեկտումին, ոսկորներու փըշըրման
Աղաղակն է՝ որ կարծես իրենց ճիգեն կը լըսվի։
Դեմքերուն վրա՛ թափված են խառնափընթոր մազերնին՝
Որոնց ծայրեն կը թորի առատ քըրտինք մ'հողին վրա։
Շունչերնին դուրս կը պոռթկա ընդհատ ընդհատ ռունգերնեն՝
Եվ միացած կուռ սայլին երկրասասան դրդրդյունին
Վայրենի նըվագը կ'ըլլա աշխատանքին այդ դաժան։
Ահավասիկ կը կաթի խարազանված ուսերնեն
Արյունն արդար, սուրբ գինին մարտիրոսված այդ Ուժին,
Որով խըխում՝ կ'արբենա ամուլ լերան ճերմակ հողն
Ուրտեղ նույնիսկ չի գըտներգաղտնամես օձը սընունդ։
Ո՛չ ալ կյանքն իր բաշխելու համար արևն հունտ մը էգ։
Այդ կատաղի վերելքեն՝ անոնց ոտքի տակ լայնշի
Հանկարծակի կը փըրթին լայնաձեռեկ ճեղքվածքով
Ժայռեն մեծդի կըտորներ. և ձորին մեջ թավալող
Պայծառահունչ կրանիդի յուրաքանչյուր կոշտ հարված
Ներբաններուն վիրավոր վարդագույն դրո՛շմը ունի։
Հոլա՛, վե՜ր, վե՜ր։ Այդ մահվամբ հըղի հրանոթն ուռնակուռ
Միջօրեի անողորմ ամառնաբորբ տոթին տակ
Ճաթելու չափ տաքցած է, շիկնալու չափ՝ հրազօծ.
Երբ կ'ընկըղմի մերթ արևն երախին մեջ լայնաբաց՝
Ան վիշապի մ'աչքին պես կը ժայթքե թուխ փայլակներ։
Մինչ խարազանն անընդհատ եղեռնաբար կը շաչե՝
Թիապարտները կարծես, գլուխնին հակած անմըռունչ
Թանձր ու կախ հոնքերուն տակ մըտասույզ, ինքնամփոփ,
Դեռ կը խորհին լեռներու իրենց ազատ կյանքին վրա,
Ո՜հ, այն լայն կյանքն՝ ուրկե շեշտ կայծակներու պես անցան
Մահ և փայլակ դրոշմելով ամեն հինցած շենքի վրա.
Ամեն պայծառ կյա՜նքն՝ որ իրենց կամքին թռիչքովը միայն

Գաղափարին աստղալից խորաններուն կը սուրար:
Ո՛չ մեկ մտածում պահպանող, ո՛չ մեկ հեշտանք, ո՛չ մեկ կույս
Կրրցավ վայրկյան մ'օդին մեջ բրռունցքն իրենց կեցրնել,
Որ շեշտակի թագերուն և գահերուն վրա կ'իջներ:
Իրենց ճակտին շողացող երկնային մե՛ն մի ճաճանչ
Սանձակոտոր եռանդի մը փոխվեցավ մրրրկահույզ.
Իրենց մեջ ոսկր ու արյուն դարձավ ամեն գաղափար.
Եվ այսպեսով մկանունքներուն ամեն մեկ բուռն հաղթանակ
Մեկ հայակապ հաղթանակն էր մարդկային մեծ Մրտքին:
Երբոր անոնք կ'անցնեին հորիզոնեն արփամուտ,
Աշխարհ վախով և հույսով տեսավ կարմիր շուքն անոնց.
Եվ արյունի մեջ մեռնող շողերուն տակ լրռավետ
Իրենց զենքերը բահեր կը թրվեին՝ որոնցմով
Խուզարկելու կ'երթային արշալույսներ նորանոր…
Սակայն հի՞մա. Ա՜հ, հիմա բրռնադատված են քաշել
Կույր հրրանոթն՝ որ պիտի վաղն արձակվի կույրերե:
Պարանն՝ որ ձիգ կրռնակնեն կաշկանդումով մը կ'անցնի
Կը պրղծի սուրբ ուսերնին՝ որոնք էին արժանի
Լոկ փառքը կրել մազերնուն արփվույն շողով սանտրրված:
Հոլա՛, վե՜ր, վե՜ր. Բայց ահա խրոխտ խոյանքով մը վերջին
Թրնդանո՜թն այն տրողրդեր լերան կատարն հանեցին
Այն թրնդանոթն՝ որուն շունչը պիտ' երթա լափլիզել
Կատաղաշարժ բանակներ, կամ քաղաքներ մարմարե.
Խաղաղ գյուղեր՝ որ ցանված բրլուրներուն լանջքին վրա՝
Արեգակին տակ կ'օծվին, կամ լուսնին տակ կ'աղոթեն:
Թիապարտներն ավասիկ հառաչակուլ հևալով
Լերան վրրա լուսողող կոթողվեցան գրլուխնին վեր.
Իրենց աչքերն, որոնց մեջ արյուննին է խրռնրվեր.
Արևուն տակ, պրղինձին մութ ու կարմին փայլին պես,
Ըսկրսան շող մ'արձակել: Անոնք տեսան իրենց շուրջ
Հորիզոններն՝ որոնց վրրա բերդեր էին կառուցված,
Պատերազմի ճամբաներ՝ բանակներու իբր ուռկան,
Եվ հասկրցան՝ որ աշխարհն իրենց թողած օրեն վեր

Մընացեր է միշտ զառամ, միշտ մեղքին տակ կորակոր.
Այն ատեն դող մը անցավ ոսկորներուն մեջ հոգնած.
Սրրտերնուն մեջ հին մոլուցքն ու մրոընչյուններն արթընցան,
Եվ զինվորները մինչդեռ կը սկրսեին վերստին
Դառնակոշկոճ, արյունոտ կրունկներն անոնց շրղթայել,
Անոնք իրենց չհասկրցված, հոգնությամբ լի հոգիով
Երեք անգամ օրհնեցին լերան գագաթը հանած
Ինքնափճացման կույր գործիք, թընդանո՛թն այն եղեռնի: